ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8 (1)
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
16.09.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 25 անդամները, բացակայում են՝ Նորիկ Վարդանյանը և Անահիտ Խեչոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավար օգնական Ե.Սահակյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:

Նախքան նիստի սկսվելը, համայնքապետրանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ էլեկտրոէներգիայի անջատման հետ կապված, ավագանու այսօրվա նիստը ուղիղ չի կարող հեռարձակվել, սակայն տեսանկարահանումից հետո նյութը կտեղադրվի համայնքի պաշտոնական կայքում:
Ս.Մուրադյանը տեղեկացրեց, որ Չարենցավան համայնքի ավագանու անդամների ավագանու նիստերից կամ քվեարկություններից, ինչպես նաև ավագանու մշտական հանձնաժողովների նիստերից բացակայությունների մասին տեղեկանքը ուղարկվել ավագանու անդամների էլ. փոստերին:
Նշվեց նաև, որ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ, նախապես ներկայացված օրակարգից հանվում է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 6-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագիծ N 87-ը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանը ողջունեց ավագանու անդամներին և շնորհավորեց Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի սկսվելու առթիվ:

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 1 նիստի օրակարգի նախագիծը՝ փոփոխված տարբերակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. ***առաջարկում եմ***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 1 նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մաս-ի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ռուսովի և Խորենացի փողոցների հիմնանորոգման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին:
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
6) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված միկրոռեգիոնալ փաստաթուղթը հաստատելու մասին:
7) Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
8) Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
9) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
10) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 25 դեմ -0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

/հազ. դրամ/

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
3.	Հողի օտարումից մուտքեր	8411	356610,762	0	9500.0	366110,762

/հազ. դրամ/

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
06	6	1	Բնկոմ. Շին. /այլ դասերին չպատկանող/	5134	25000,0	0	9500,0	34500,0

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 1000.0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	06	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դաս. չպատկանող/	4241	7610,0	400,0	0	8010,0
01	06	1	Չարենցավանի «Մշակույթ» ՀՈԱԿ	4511	115005,0	400,0	0	115405,0
08	01	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	4729	600,0	200,0	0	800,0

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ռուսովի և Խորենացի փողոցների հիմնանորոգման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը և 86-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բ) ենթակետով սահմանված դրույթները, ***առաջարկում եմ.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ռուսովի և Խորենացի փողոցների հիմնանորոգման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՑՑ
1.	Արտուր Ասլանյան	8-12-19	16 100 000	Սեփականություն	Անհատույց

2. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

/Զեկ. Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, հաշվի առնելով Նաիրա Աթումյանի 04.09.2023թ. թիվ 2824/11 դիմումը , ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Չարենցավան, 6-րդ թաղամաս, 31-րդ շենք, 34 հասցեում գտնվող բնակարանը 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրելու ***Նաիրա Աթումյանին, Անահիտ Գալստյանին, Ավետ Աթումյանին, Անահիտ Օհանջանյանին*** քաղաքացիներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված միկրոռեգիոնալ փաստաթուղթը հաստատելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.4-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 08-ի N 2-7 դրական եզրակացությունը և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման» կարգի դրույթները, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքը (Չարենցավան քաղաքը, գ.Ալափարս,գ.Արզական, գ.Բջնի, գ.Կարենիս, գ.Ֆանտան բնակավայրեր) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Կոտայք 7» համակցված տարածական պլանավորման նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

6. Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Անդրանիկ Քոչարյանի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը. ***առաջարկում եմ.***

1. Սեփականության իրավունքով ***Անդրանիկ Քոչարյանին*** պատկանող 07-019-0413-0108 ծածկագրով 0.346967 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի և այլ հողատեսքից 0.20967 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի, իսկ 0.14 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել, որպես ջրային նշանակության ջրային հողատեսքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

7. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ 07-007-0056-0008 կադաստրային ծածկագրերով հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին. ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու ***Իգոր Պողոսյանին*** սեփականության իրավունքով պատկանող Ռուսովի փողոց 1-ին փակուղի թիվ 7 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 07-007-0056-0008 կադաստրային ծածկագրով՝ 29 քմ մակերեսով հողատարածքը /կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Համայնքի ավագանու անդամ Արթուր Գալստյանը հարց բարձրացրեց փողոցային առևտրի կարգավորման, մասնավորապես Չարենցի փողոցում ավազի վաճառքի վերաբերյալ:

Աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վարուժան Բարսամյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

Համայնքի ավագանու անդամ Լիլիթ Հարոյանը առաջարկեց համայնքում բացել թափառող շների կացարան: Քննարկումից հետո որոշվեց ստեղծել աշխատախումբ, կազմակերպել հանարային լսումներ, հանդես գալ այլ առաջարկներով:

Աշխատանքային քննարկում ծավալվեց նաև շենքերի նկուղների ջրատար խողովակների նորոգման, քաղաքի շենքերի շքամուտքերի դռները փոխելու, նախադպրոցական և արտադպրոցական ՀՈԱԿ-ների աշխատողների աշխատավարձի բարձրացման շուրջ:

Լսեցին.

9. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 20-րդ շենքի 33-րդ բնակարանի բնակիչ Մարինե Դավթյանի 2024 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ 4164-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 40-րդ շենքի 27-րդ բնակարանի բնակիչ Վիտալի Կարապետյանի 2024 թվականի օգոստոսի 20-ի թիվ 3981-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամասի 11-րդ շենքի 9-րդ բնակարանի բնակիչ Սպարտակ Ազարյանի 2024 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 4184-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել **Մարինե Խաչիկի Դավթյանին :**
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել **Վիտալի Ռոբերտի Կարապետյանին :**
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729«Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել **Սպարտակ Սարգսի Ազարյանին :**
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

10. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օր և ժամը սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 14-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաբայան Նարեկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մալխասյան Նորիկ

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Սահակյան Գառնիկ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ